ՀՀ, ք. Երևան 0010, Բյուզանդի 1, տարածք 50
Հեռ/Ֆաքս: (374 10) 544587, (374 60) 53 45 87
Էլ. փոստ՝ general@fcm.am
Կայք՝ www.fcm.am

Հաստատված է
«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» Սահմանափակ
Պատասխանատվությամբ Ընկերության
միակ մասնակցի թիվ 8 որոշմամբ
«04» նոյեմբերի 2026թ.
Միակ մասնակից՝ Տ. Խանիկյան

(ստորագրություն)

«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(նոր խմբագրությամբ)

ԵՐԵՎԱՆ – 2026թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Կանոնակարգի կարգավորման առարկան

1.1.1 Սույն Կանոնակարգը սահմանում է «Ֆյուչր Կապիտալ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից Ընկերության «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության» գործող կանոնակարգի պահանջներին համապատասխան մատուցվող ծառայությունների սակագները (Հավելված 1):

1.2 Կանոնակարգի կիրառման ոլորտը

1.2.1 Սույն Կանոնակարգի պահանջները կիրառվում են այն թողարկողների, հաշվետերերի և այլ անձանց նկատմամբ, ովքեր «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենքով (այսուհետ՝ Օրենք) և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով օգտվում են սույն կանոնակարգով սահմանված ծառայություններից:

1.3 Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացությունները

1.3.1 Սույն Կանոնակարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) **«ՀՀ դրամ»**. Հայաստանի Հանրապետության դրամ.

2) **«Սակագին»**. սույն կանոնակարգով սահմանված՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարի չափ՝ արտահայտված համապատասխան ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով կամ ՀՀ դրամով:

1.3.2 Սույն Կանոնակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված նշանակությունները:

1.4 Ծառայությունների դիմաց վճարվող դրամական միավորը

1.4.1 Սույն Կանոնակարգով սահմանված՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից վճարումների դեպքերի, որոնք կարող են իրականացվել նաև ազատ փոխարկելի արտարժույթով (ԱՄՆ դոլար, Եվրո), ինչպես նաև ռուսական ռուբլիով: Արտարժույթով վճարման դեպքում ՀՀ դրամով արտահայտված գումարները վերահաշվարկվում են համապատասխան արտարժույթի՝ հաշիվը դուրս գրելու օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով:

1.4.2 Եթե Ընկերության կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվում է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և/կամ ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքն արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան սակագինը:

1.5 Ծառայությունների դիմաց վճարման կարգը

1.5.1 Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է անկանխիկ ձևով (փոխանցումով) մինչև Օրենքով, այլ իրավական ակտերով և Ընկերության կանոնակարգերով սահմանված կարգով ծառայություններից օգտվելու համար համապատասխան փաստաթղթերն Ընկերությանը ներկայացնելը (հանձնարարականը/հարցումն էլեկտրոնային ձևով փոխանցելուց առաջ), բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվել են վճարման երաշխիքներ, վճարման երաշխիքն ամրագրված է վճարողի և Ընկերության միջև կնքված պայմանագրով: Ընդ որում, պայմանագրային դրույթներով ամրագրված երաշխիքները հիմք են, որպեսզի վճարողն Ընկերության ծառայություններից օգտվելու դիմաց վճարումներն իրականացնի Ընկերության հետ կնքած համապատասխան պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

1.5.2 Ընկերության ծառայություններից օգտված անձինք (այսուհետ՝ Հաճախորդ) պետք է Ընկերության կողմից հաշիվը ներկայացնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում վճարեն իրենց մատուցված ծառայությունների համար հաշվում ներառված գումարի ամբողջ ծավալով:

1.5.3 Եթե Ընկերության կողմից մատուցվող որևէ ծառայության սակագինը գերազանցում է 500 000 (Հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը կամ դրան համարժեք այլ արտարժույթը (ԱՄՆ դոլար, Եվրո, ռուսական ռուբլի), ապա Հաճախորդի կողմից վճարումը պետք է իրականացվի մինչև համապատասխան ծառայության մատուցումը՝ Ընկերության կողմից տրված փոխանցման հաշվի հիման վրա:

1.5.4 Հաճախորդի կողմից վճարումը սույն Կանոնակարգի 1.5.2 կետով սահմանված ժամկետում չկատարելու կամ ուշացնելու դեպքում Ընկերությունը Հաճախորդի նկատմամբ իրավունք ունի հաշվարկել տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի (առանց տույժերի) 0.15%-ի չափով:

1.5.5 Սույն Կանոնակարգով նախատեսված սակագները չեն ներառում ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) և ենթակա են ԱԱՀ-ով հարկման՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

1.5.6 Այն դեպքում, երբ սույն Կանոնակարգին համապատասխան հաշվարկված գումարները՝ ԱԱՀ-ն ներառյալ, կազմված են ամբողջ թվերից և որոշակի լումաներից, ապա լումաները կլորացվում են դեպի ներքև 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:

1.5.7 Սույն կանոնակարգի Հավելված 1-ի 11.3, 11.5 և 11.6 կետերով սահմանված սակագների գումարները գանձվում են ինչպես արժեթղթեր փոխանցողից, այնպես էլ արժեթղթեր ստացողից, ընդ որում, սակագնի հաշվարկման հիմք է հանդիսանում տվյալ աշխատանքային օրվա ընթացքում արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված հանձնարարականում նշված գործարքի առարկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:

1.5.8 Այն դեպքում, երբ թողարկողը կամ հաշվետերը ցանկանում են ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից տեղեկություններ ստանալ հայերենի հետ միաժամանակ նաև անգլերեն կամ ռուսերեն լեզուներով, ապա այդ տեղեկությունների տրամադրման դիմաց գանձվում է միայն անգլերեն կամ ռուսերեն լեզուներով տեղեկության տրամադրման սակագինը:

1.5.9 Ընկերության և Հաճախորդների միջև կայուն և երկարատև հարաբերությունների կառուցման և զարգացման նպատակահարմարությունից ելնելով՝ Ընկերության գործադիր տնօրենի հրամանով կարող են սահմանվել չափանիշներ, որոնց համապատասխանող Հաճախորդների համար կարող են կիրառվել այլ՝ առավել բարենպաստ սակագներ: Սույն կետում նշված Հաճախորդների համար սույն Կանոնակարգի 1.5.3 կետի պահանջը կարող է չկիրառվել:

1.6 Ծառայությունների մատուցման կասեցման դեպքերում վճարման առանձնահատկությունները

1.6.1 Ընկերությունն իրավունք ունի կասեցնել սույն Կանոնակարգով նախատեսված ծառայությունների մատուցումն իր միջնորդությամբ ռեեստրի վարման պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող թողարկողներին, եթե վերջիններս Ընկերության նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավելի ժամկետանց պարտավորություն կամ եթե թողարկողը դատարանի ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ:

1.6.2 Ընկերությունն իրավունք ունի կասեցնել սույն Կանոնակարգով նախատեսված ծառայությունների մատուցումն իր միջնորդությամբ արժեթղթերի պահառության պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող հաշվետերերին, եթե վերջիններս Ընկերության նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավելի ժամկետանց պարտավորություն կամ եթե հաշվետերը դատարանի ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ:

1.6.3 Ընկերության կողմից ծառայությունների մատուցման կասեցման դեպքերում վճարման առանձնահատկությունները կարգավորվում են Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ի «Սակագների մասին» գործող կանոններով:

2. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Սույն Կանոնակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից և ուժի մեջ են մտնում Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:

2.2 Սույն Կանոնակարգով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են Օրենքով և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ

«Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոնակարգ»-ի պահանջներին համապատասխան մատուցվող ծառայությունների սակագները

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	ՄԻԱՎՈՐ	ՍԱԿԱԳԻՆ
1. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԱՌՄԱՆ (ՌԵԵՍՏՐԱՎԱՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
1.1 Թողարկողի արժեթղթերի ռեեստրի սկզբնական տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում		
Թողարկողի վերաբերյալ տվյալների գրանցում ծրագրային Համակարգում		անվճար
Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում		անվճար
1.2 Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, ներդրումային ֆոնդերի փայերի[1] հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում). (Տվյալ դասի տեղաբաշխված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում առկա հաշիվների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ)		
Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, փայերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	5 500 ՀՀ դրամ / 1-ից մինչև 49-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ (ամսական)
		9 000 ՀՀ դրամ / 50-ից մինչև 99-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ (ամսական)
		13 500 ՀՀ դրամ / 100-ից մինչև 199-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ (ամսական)
		20 000 ՀՀ դրամ / 200-ից մինչև 499-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ (ամսական)

[1] Բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի:

		25 000 ՀՀ դրամ / 500-ից մինչև 999-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ (ամսական)
		60 000 ՀՀ դրամ / 1 000 և ավելի տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ (ամսական)
1.3 Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում). (Արտարժույթով արտահայտված անվանական արժեք ունեցող պարտատոմսերի հաշվառման (արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման և պահպանման) սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ ամսվա վերջին օրվա համար ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի հաշվարկով)		
Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Տեղաբաշխված պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) յուրաքանչյուր դասի համար ընդհանուր անվանական արժեք	Մինչև 1 550 000 000 ՀՀ դրամը / 0.004% (ամսական)
		1 550 000 000 ՀՀ դրամից ավել/ 62 000 ՀՀ դրամ (ամսական)
1.4 Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում (սակագինը վճարում է այն հաշվի օպերատորը, որի միջնորդությամբ վերակնքվել է պայմանագիրը)		
Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար	5 000 ՀՀ դրամ
1.5 Ռեեստրի վարման պայմանագրով նախատեսված ծառայությունների վերսկսում		
Թողարկողի կասեցված պայմանագրի վերսկսման միանվագ վճար	Յուրաքանչյուր պայմանագրի համար	50 000 ՀՀ դրամ
1.6 Ռեեստրի վարման պայմանագրով նախատեսված ծառայությունների շրջանակից դուրս լրացուցիչ աշխատանքների կատարում[2]		

[2] Հաճախորդների (թողարկողների և/կամ հաշվետերերի) ռիսկահեն ուսումնասիրության ընթացքում ի հայտ եկած հավելյալ գործողություններ, որոնք պահանջում են լրացուցիչ ժամանակ և վերլուծական ռեսուրսներ: Մասնավորապես, այդ աշխատանքները կարող են ներառել հաճախորդի սեփականատերերի արտասովոր և/կամ բարդ կառուցվածքի ուսումնասիրություն (սեփականության բազմաստիճան շղթայի, փոխկապակցված ընկերությունների և փաստացի վերահսկողության ուսումնասիրություն); պատժամիջոցների ցանկերում կամ բացասական հրապարակումներում հայտնաբերված հնարավոր համընկնումների խորացված ստուգում (հայտնաբերված համընկնումների ուսումնասիրություն, բացասական հրապարակումների հավաստիության գնահատում); հաճախորդի (այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձի) ֆինանսական միջոցների և ունեցվածքի ծագման լրացուցիչ վերլուծություն (օրինականությունը հիմնավորող՝ լրացուցիչ փաստաթղթերի և տեղեկությունների հավաքագրում ու վերլուծություն), ինչպես նաև այլ բարդ ուսումնասիրություններ:

Լրացուցիչ աշխատանքների կատարման միանվագ վճար		100 000 ՀՀ դրամ
2. Տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայություններ (բացառությամբ կարգավորվող շուկայի միջոցով տեղաբաշխված, ինչպես նաև վերակազմակերպման հիմքով արժեթղթերի փոխարկումն ապահովելու համար լրացուցիչ տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառման դեպքերի, ընդ որում՝ արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման արդյունքում տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայությունների սակագինը տեղաբաշխման գործընթացի վերջում վերահաշվարկվում է ընդհանուր անվանական ծավալի սկզբունքով)		
2.1 Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում (բաժնետոմսերի տեղաբաշխում, բացառությամբ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)		
Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	0.1%, նվազագույնը 50 000 ՀՀ դրամ, առավելագույնը 4 500 000 ՀՀ դրամ
2.2 Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում (պարտատոմսերի տեղաբաշխում, բացառությամբ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)		
Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխված պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական արժեք	0.01%, նվազագույնը 50 000 ՀՀ դրամ, առավելագույնը 3 000 000 ՀՀ դրամ
2.3 Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում		
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	Մինչև 1 000 000 000 ՀՀ դրամը /0.2%
		1 000 000 000 ՀՀ դրամից ավել / 2 000 000 ՀՀ դրամ
2.4 Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում		
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական արժեք	0.01%, նվազագույնը 400 000 ՀՀ դրամ, առավելագույնը 1 700 000 ՀՀ դրամ

3. Թողարկողի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում

3.1 Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում. (ներառում է արժեթղթերի փոխարկումը (այդ թվում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման, արժեթղթերի համախմբման (կոնսոլիդացիա) և բաժանման հիմքով), թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերը մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերի փոխարկումը, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման այն դեպքի, երբ արժեթղթերի քանակի և անվանական արժեքի փոփոխություն տեղի չի ունենում) արդյունքում արժեթղթերի փոխարկումը, թողարկողի՝ իր կողմից թողարկված արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) ձեռքբերումը, հետգնումը և մարումը կամ չեղյալ համարումը: Ընդ որում՝ փոխարկման դեպքում ծառայության սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկման արդյունքում գրանցվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը, բացառությամբ բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման հիմքով բաժնետոմսերի փոխարկման դեպքերի: Բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպմամբ պայմանավորված կորպորատիվ գործողության դեպքում տվյալ սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը)

Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում (բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի)	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	0.1%, նվազագույնը 25 000 ՀՀ դրամ, առավելագույնը 3 000 000 ՀՀ դրամ
Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում	Կորպորատիվ գործողության առարկա՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական ծավալ	0.01%, նվազագույնը 1 500 ՀՀ դրամ, առավելագույնը 250 000 ՀՀ դրամ
Թողարկողի արժեթղթերի հաշվի բացում/փակում	Հաշիվ	անվճար
Թողարկողի արժեթղթերի դատարկ (արժեթղթերի զրոյական մնացորդով) հաշվի պահպանում	Հաշիվ	անվճար

4. Թողարկողի հարցման հիման վրա իր կամ իր կողմից թողարկված (տեղաբաշխված) արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հետ կապված ծառայություններ

4.1 Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում		
Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում	Ցուցակ	5 000 ՀՀ դրամ
Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն լեզուներով		10 000 ՀՀ դրամ
Գործառնության գրանցման արդյունքում արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում		Անվճար
4.2 Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի /առանց հիմքերի/ տրամադրում		
Տեղեկանքի տրամադրում էլեկտրոնային և/կամ թղթային եղանակով	Տեղեկանք	15 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն լեզուներով		30 000 ՀՀ դրամ
4.3 Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով), ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվում են գործառնությունների հիմքերը կամ տեղեկանք գործառնությունների բացակայության վերաբերյալ		
Տեղեկանքի տրամադրում էլեկտրոնային և/կամ թղթային եղանակով	Տեղեկանք	25 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն լեզուներով		50 000 ՀՀ դրամ
4.4. Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով), ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվում են գործառնությունների հիմքերը կամ տեղեկանք գործառնությունների բացակայության վերաբերյալ		
Տեղեկանքի տրամադրում էլեկտրոնային և/կամ թղթային եղանակով	Տեղեկանք	30 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն լեզուներով	Տեղեկանք	60 000 ՀՀ դրամ
4.5. Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)		
Տեղեկանքի տրամադրում էլեկտրոնային և/կամ թղթային եղանակով	Տեղեկանք	15 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն լեզուներով	Տեղեկանք	30 000 ՀՀ դրամ

5. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ներառում է թողարկողի գտնվելու կամ գործունեության վայրի, բաժնետիրական ընկերությունների տեսակի, տնօրենի փոփոխության, ընկերության անվանման փոփոխության կամ արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխությունը (արժեթղթերի փաստաթղթային ձևի փոփոխությունը ոչ փաստաթղթայինի և հակառակը))		
Տվյալների փոփոխության մուտքագրում Համակարգ		5 000 ՀՀ դրամ (տարվա մեջ 1 անգամ անվճար)
6. ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում	Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար	0.25%, նվազագույնը 25 000 ՀՀ դրամ (սակագինը հաշվարկվում է յուրաքանչյուր գործընթացի համար)
7. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵԿՏՐՈՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ		
Պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում	Վճարված / բաշխված դրամական միջոցների գումարը	0.025%, նվազագույնը 50 000 ՀՀ դրամ (սակագինը հաշվարկվում է յուրաքանչյուր գործընթացի համար)
8. ԾԱՆՈՒՑՈՒՄ ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ (ՓԱՅԵՐԻ) ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԱՐԺԵԹՂԹԵՐԻ (ՓԱՅԵՐԻ) ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ)		
Ծանուցում	տարեկան	250 000 ՀՀ դրամ
9. ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՕՐԵՆՔՈՎ ԵՎ ԻՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ		
Հսկողության իրականացում	Տարեկան	1 000 000 ՀՀ դրամ
9՛. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԻ ԿԱՄ ՄԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՏԳՆՄԱՆ ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄ (ՍԱԿԱԳԻՆԸ ԳԱՆՁՎՈՒՄ Է ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻՑ)		
Փայերի տեղաբաշխման նպատակով գնման հայտի ընդունում և գրանցում	Յուրաքանչյուր հայտ	Անվճար
Փայերի մարման նպատակով հետգնման հայտի ընդունում և գրանցում	Յուրաքանչյուր հայտ	Անվճար
10. ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		

10.1 Սեփականատերերի արժեթղթերի հաշիվներում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանման հետ կապված ծառայություններ		
10.1.1 Արժեթղթերի (փայերի) հաշվի բացում, փոփոխություն, պահպանում և փակում		
Արժեթղթերի հաշվի բացում (ռեզիդենտ հաճախորդների համար)	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
Արժեթղթերի հաշվի բացում (ոչ ռեզիդենտ հաճախորդների համար)		10 000 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում (ռեզիդենտ հաճախորդների համար)		5 000 ՀՀ դրամ (տարվա մեջ 1 անգամ անվճար)
Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում (ոչ ռեզիդենտ հաճախորդների համար)		10 000 ՀՀ դրամ
Հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում (այս ծառայության դիմաց սակագնի հաշվարկումը սկսվում է հաշվետիրոջ հաշվի վերաբացման կամ բացման պահից)	Յուրաքանչյուր օրվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ ԿԲ-ին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	Ամսական 0.00075%, նվազագույնը 500 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվի փակում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
10.2 Արժեթղթերի պահառության պայմանագրով նախատեսված ծառայությունների վերսկսում		
Հաշվետիրոջ կասեցված պայմանագրի վերսկսման միանվագ վճար	Յուրաքանչյուր պայմանագրի համար	10 000 ՀՀ դրամ
10.3 Արժեթղթերի պահառության պայմանագրով նախատեսված ծառայությունների շրջանակից դուրս լրացուցիչ աշխատանքների կատարում		
Լրացուցիչ աշխատանքների կատարման միանվագ վճար		100 000 ՀՀ դրամ

11. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Փոխանցման սակագինը չի գանձվում այն դեպքերում, երբ արժեթղթեր փոխանցող / ստացող կողմ է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը)

11.1 Բաժնետոմսերի (փայերի) հասարակ փոխանցում ցանկացած հիմքով, ներառյալ՝ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով (վճարում է փոխանցող/շահագրգիռ կողմը)): Ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:

Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք[3]	0.1%, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ, առավելագույնը 4 500 000 ՀՀ դրամ

11.2 Պարտատոմսերի հասարակ փոխանցում ցանկացած հիմքով, ներառյալ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով (վճարում է փոխանցող/շահագրգիռ կողմը)): Ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:

Պարտատոմսերի փոխանցում (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	0.01%, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ, առավելագույնը 500 000 ՀՀ դրամ

11.3 Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում մեկ հաշվից մյուսին

Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Հանձնարարգիր/ վճարումն իրականացնում է յուրաքանչյուր կողմը	7 000 ՀՀ դրամ

11.4 Պորտֆելի փոխանցում՝ մեկ հաշվի օպերատորի մոտ բացված հաշվետիրոջ հաշվից այլ հաշվի օպերատորի մոտ բացված տվյալ հաշվետիրոջ հաշվին՝ արժեթղթերի հաշվում առկա ամբողջ մնացորդի փոխանցմամբ

Պորտֆելի փոխանցում	Հանձնարարագիր/ վճարումն իրականացնում է փոխանցող կողմը	5 000 ՀՀ դրամ

11.5 Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում "Առաքում վճարման դիմաց" սկզբունքով ցանկացած հիմքով

[3] Եթե գործարքի առարկա հանդիսացող բաժնետոմսերի փաստացի (շուկայական) արժեքը 2 և ավելի անգամ գերազանցում է գործարքի առարկա հանդիսացող բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքին՝ վերոնշյալ ծառայության համար Ընկերության սակագինը կգանձվի գործարքի առարկա հանդիսացող բաժնետոմսերի փաստացի (շուկայական) արժեքից:

Բաժնետոմսերի (փայերի) DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք/ վճարումն իրականացնում է յուրաքանչյուր կողմը	0.6%, նվազագույնը 6 000 ՀՀ դրամ, առավելագույնը 4 500 000 ՀՀ դրամ
11.6 Պարտատոմսերի փոխանցում "Առաքում վճարման դիմաց" սկզբունքով՝ ցանկացած հիմքով		
Պարտատոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք / վճարումն իրականացնում է յուրաքանչյուր կողմը	0.02%, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ, առավելագույնը 500 000 ՀՀ դրամ
11.7 Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցում		
Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք / վճարումն իրականացնում է գրավառուն	0.25%, նվազագույնը 3 500 ՀՀ դրամ, առավելագույնը 350 000 ՀՀ դրամ
12. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՎԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ, ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԱՌԵՑՄԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
12.1 Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականով տվյալ հաշվետիրոջ անունով բացված հաշվում արժեթղթերի գրավի իրավունքի գրանցում		
Բաժնետոմսերի (փայերի) գրավի իրավունքի գրանցում	Գրավի առարկա բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք / վճարումն իրականացնում է գրավատուն/շահագրգիռ կողմը	0.1%, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ, առավելագույնը 3 000 000 ՀՀ դրամ

Պարտատոմսերի գրավի իրավունքի գրանցում	Գրավի առարկա պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք / վճարումն իրականացնում է գրավատուն/շահագրգիռ կողմը	0.05%, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ, առավելագույնը 1 500 000 ՀՀ դրամ
12.2 Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականի հիման վրա արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում		
Սառեցում	Սառեցված արժեթղթե-րի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք / վճարումն իրականացնում է հաշվետերը	0.1%, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ, առավելագույնը 2 500 000 ՀՀ դրամ
12.3 Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում		
Առևտրային արգելադրում		Անվճար
12.4 Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար		
Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում	Քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	0.5%, նվազագույնը 10 000 ՀՀ դրամ
12.5 Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում		
Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում	Գրավադրված, սառեցված, առևտրային նպատակով արգելադրված և այլ սահմանափակումների ենթարկված արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	Անվճար
13. ՀԱՇՎԵՏԻՐՈՋԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ		
13.1 Հաշվետիրոջ հարցման հիման վրա բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)		

Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում՝ հաշվում առկա բոլոր դասերի արժեթղթերի մասով (ռեեստրից քաղվածք)	Քաղվածք	5 000 ՀՀ դրամ (տարվա մեջ 2 անգամ անվճար)
Արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում	Հաշվետվություն	5 000 ՀՀ դրամ (տարվա մեջ 2 անգամ անվճար)
Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում	Տեղեկանք	5 000 ՀՀ դրամ
Հաշվետվություն արժեթղթերի հաշվում գրանցված գրավի իրավունքների վերաբերյալ	Հաշվետվություն	5 000 ՀՀ դրամ
13.1 կետով սահմանված տեղեկությունների տրամադրում ռուսերեն կամ անգլերեն լեզուներով	Քաղվածք/տեղեկանք/ հաշվետվություն	10 000 ՀՀ դրամ
13.2 Հաշվետիրոջ հարցման հիման վրա բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների վերաբերյալ ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից տեղեկանքի տրամադրում (հիմքերով)		
Տեղեկանքի տրամադրում էլեկտրոնային և/կամ թղթային եղանակով	Տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն լեզուներով		20 000 ՀՀ դրամ
13.3. Հաշվետիրոջ հարցման հիման վրա բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների վերաբերյալ ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)		
Տեղեկանքի տրամադրում էլեկտրոնային և/կամ թղթային եղանակով	Տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն լեզուներով	Տեղեկանք	20 000 ՀՀ դրամ
14. ԱՆՎԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ և ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
14.1 Հաշվի օպերատոր չհանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում		
Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	275 000 ՀՀ դրամ
Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար

Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի պահպանում (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի)	Յուրաքանչյուր օրվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ ԿԲ-ին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	Ամսական 0.002%, նվազագույնը 15 000 ՀՀ դրամ

14.2 Հաշվի օպերատոր հանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում

Անվանատիրոջ հաշվի բացում		Անվճար
Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի պահպանում (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի)	Յուրաքանչյուր օրվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ ԿԲ-ին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների	Ամսական 0.002%, նվազագույնը 10 000 ՀՀ դրամ

	անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	

15. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՀԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՀԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ծառայությունների շրջանակը կարող է տարբերվել՝ կախված օտարերկրյա պահառուից)		
15.1 Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման և այդ արժեթղթերով գործառնությունների սպասարկման ծառայություններ[4]		
ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված և Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանում	Օտարերկրյա պահառուի կողմից սահմանված միավոր/տարեկան	Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված սակագին (ներառյալ հարկերը) + 100%
Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանում		Համաձայն սույն Կանոնակարգի հավելված 2-ի
15.2 Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման և այդ արժեթղթերով գործառնությունների սպասարկման ծառայությունների մասով այլ ծառայություններ		
Օտարերկրյա պահառուի միջոցով հանձնարարականի կատարման շրջանակներում հարկային և/կամ համապատասխանության հավաստիացումների տրամադրում	Հանձնարարական	400 000 ՀՀ դրամ
Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի սինթետիկ «Առաքում վճարման դիմաց» (DVP) սկզբունքով փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	0.5%

[4] ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքված ռեպո/հակադարձ ռեպո գործարքի արդյունքում ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի պահպանման սակագինը հաշվարկվում է արժեթղթերը փոխանցած կողմի նկատմամբ:

Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի դուրսգրում (Mark Down)	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	0.2%, բացառությամբ առանձնացված հաշվառման ենթակա հաշիվների[5], որոնց դեպքում սակագինը կազմում է 2%
Օտարերկրյա պահառուի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային առաջարկվող ծառայություններ, որոնք նախատեսված չեն սույն Կանոնների այլ կետերով (ծառայությունների ցանկը սահմանվում է ըստ օտարերկրյա պահառուի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային առաջարկվող ծառայությունների, որոնց ցանկը հրապարակվում է օտարերկրյա պահառուի պաշտոնական ինտերնետային էջում)	Օտարերկրյա պահառուի կողմից սահմանված միավոր	Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված[6] սակագին (ներառյալ հարկերը) + 100%

[5] Առանձնացված հաշվառման ենթակա հաշիվներ, որոնց առնչությամբ սանկցիոն, ՓԼԱՖ դեմ պայքարի կամ այլ հիմքերով Օտարերկրյա պահառուի և/կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարվել է հատուկ նշում, ստացվել է հաղորդագրություն, հանձնարարական, կամ տվյալ հաշիվները այլ կերպ նույնականացվել են որպես այդպիսին:

[6] Օտարերկրյա պահառուների միջոցով մատուցվող ծառայությունների ցանկը և սակագները (ինչպես նաև դրանց փոփոխությունները (ըստ հնարավորության՝ պայմանավորված օտարերկրյա պահառուի կիրառելի ընթացակարգերով)՝ ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ) հրապարակվում են Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին մատուցվող ծառայությունների:

Հավելված 2

«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերության «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության սակագների մասին» կանոնակարգի

Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման ծառայությունների սակագներ և դրանց հաշվարկման կարգ

1. Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման ծառայությունների սակագները հաշվարկվում են ըստ յուրաքանչյուր հաճախորդի և պահպանվող արժեթղթերի համախմբի ռիսկի աստիճանի՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

Արժեթղթի հատկանիշներ	**Հաճախորդի հատկանիշներ**		
	ՀՀ հաճախորդներ բացառությամբ ՀՀ-ում գրանցված ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի	Այլ երկրների հաճախորդներ[7] և ՀՀ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդեր[8]	Հաճախորդներ, որոնց հաշիվները և ակտիվները ենթակա են առանձնացված հաշվառման[9]
ՀՀ-ում գրանցված սուբյեկտների կողմից թողարկված կամ ՀՀ պետական արժեթղթեր, եթե այլ բան նախատեսված չէ Կանոններով	1-ին ռիսկի խումբ	1-ին ռիսկի խումբ	1-ին ռիսկի խումբ

[7] Բացառությամբ նախորդ և հաջորդ սյունակներում նշված հաճախորդների:

[8] Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի իրական շահառու են դիտարկվում ֆոնդի կառավարիչը/կառավարող ընկերությունը (վերջինիս իրական շահառուն), ինչպես նաև ֆոնդի մասնակիցները (վերջիններիս իրական շահառուները):

[9] Առանձնացված հաշվառման ենթակա հաշիվներ և/կամ ակտիվներ, որոնց առնչությամբ պատժամիջոցների, ՓԼԱՖ դեմ պայքարի կամ այլ հիմքերով Օտարերկրյա պահառուի և/կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարվել է հատուկ նշում, ստացվել է հաղորդագրություն, հանձնարարական, կամ տվյալ հաշիվները և/կամ ակտիվները այլ կերպ նույնականացվել են որպես այդպիսին:

Այլ երկրներում գրանցված սուբյեկտների կողմից թողարկված արժեթղթեր[10]	1-ին ռիսկի խումբ	2-րդ ռիսկի խումբ	3-րդ ռիսկի խումբ
Այն երկրներում գրանցված սուբյեկտների կողմից թողարկված արժեթղթեր, որոնք միջազգային պատժամիջոցների տեսանկյունից համարվում են բարձր ռիսկային	1-ին ռիսկի խումբ	3-րդ ռիսկի խումբ	3-րդ ռիսկի խումբ

2. Յուրաքանչյուր ռիսկի խմբի համար ծառայության սակագինը սահմանվում է համաձայն ստորև ներկայացված աղյուսակի, եթե այլ բան նախատեսված չէ Կանոններով.

Ռիսկի խումբ	**Միավորը**	**Սակագին**
1-ին ռիսկի խումբ	Օտարերկրյա պահառուի կողմից սահմանված միավոր/տարեկան	Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված սակագին (ներառյալ հարկերը) + 50%
2-րդ ռիսկի խումբ	Օտարերկրյա պահառուի կողմից սահմանված միավոր/տարեկան	
3-րդ ռիսկի խումբ	Օտարերկրյա պահառուի կողմից սահմանված միավոր/տարեկան	

3. Այն դեպքերում, երբ միևնույն հաճախորդի նկատմամբ միաժամանակ ենթակա է կիրառման մեկից ավելի սակագին, կիրառելի է առավել բարձր սակագինը:

[10] Բացառությամբ նախորդ և հաջորդ տողերում նշված արժեթղթերի: